ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

6 նոյեմբերի 2021թ. **N 241-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՇՏԱՐԱԿ, ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՀՐԱԶԴԱՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԼՈՌՈՒ, ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՍՓՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, 138-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին՝

1) հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ համապատասխան մարզերում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի կողմից եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2021թ. նոյեմբերի 6-ի թիվ 241-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇՏԱՐԱԿ, ԱՐՏԱՇԱՏ, ԱՐՄԱՎԻՐ, ԳԱՎԱՌ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՀՐԱԶԴԱՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍԻ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՍՓՌՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին (այսուհետ՝ կուսակցություն) նախընտրական քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ և (կամ) հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է հավասար պայմաններով՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրվում է ժամը 18:30-ից՝ որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Նախընտրական քարոզչության եթերաժամանակը հեռարձակվում է ըստ մարզկենտրոնների՝ հետևյալ հաջորդականությամբ՝

- Աշտարակ.
- Արմավիր.
- Արտաշատ.
- Գավառ.
- Եղեգնաձոր.
- Հրազդան.
- Վանաձոր:

Որևէ մարզկենտրոնի քարոզչության ընթացքում չի կարող հեռարձակվել այլ մարզկենտրոնում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների) քարոզչական նյութը:

3. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է ժամը 13:30-ից:

4. Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից նշված ժամանակահատվածը կարող է տեղաշարժվել, բայց ոչ ավելի, քան 30 րոպե՝ որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

5. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով սույն կարգի 2-րդ կետով սահմանված ժամանակահատվածում հանրային հեռուստատեսությունը տրամադրում է քարոզչության յուրաքանչյուր օրվա համար 1 րոպե:

Յուրաքանչյուր օրվա համար կարող է տրամադրվել մինչև 1 րոպե եթերաժամ վճարովի հիմունքներով:

6. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածներում, հանրային ռադիոն տրամադրում է քարոզչության յուրաքանչյուր օրվա համար 1 րոպե:

Յուրաքանչյուր օրվա համար կարող է տրամադրվել մինչև 1 րոպե եթերաժամ վճարովի հիմունքներով:

7. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի վճարովի եթերաժամը տրամադրվում է անվճար եթերաժամանակի հետ միաժամանակ՝ անվճար եթերաժամանակի համար սահմանված հերթին համապատասխան:

8. Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հեռուստատեսային եթերաժամը տրամադրվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» ծրագրով, իսկ ռադիոեթերաժամը՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության «Առաջին ծրագիր» ռադիոծրագրով (Հայաստանի հանրային ռադիոընկերության 69.7 ՄՀց գերկարճ և FM հանրապետական ցանցով:

9. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցության ներկայացուցիչներին նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով տրամադրվում է ուղիղ եթեր, նրանց ցանկությամբ՝ նաև հաղորդավարի մասնակցությամբ, կամ հեռարձակվում է կուսակցության կողմից ներկայացված տեսաերիզը (ձայներիզը): Հաղորդավար տրամադրվելու դեպքում պահպանվում է լրագրողի գործունեության ազատության սկզբունքը:

10. Եթերաժամը տրամադրվում է ըստ կուսակցությունների կողմից նախապես ներկայացված հայտերի՝ հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի և Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցության միջև սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա, որը բոլոր կուսակցությունների համար պետք է սահմանի հավասար պայմաններ:

11. Եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս ընտրություններին մասնակցող կուսակցության անունից կարող է հանդես գալ կուսակցության լիազոր ներկայացուցիչը կամ կուսակցության կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է կուսակցության լիազոր ներկայացուցչի վկայականի լուսապատճենը կամ կուսակցության կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը, վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար՝ նաև կուսակցության նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը: Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26 հասցեով (հեռ. (010) 65-00-15 (238), +374 91 51-61-54, էլ. փոստ simon.farmanyan@1tv.am), իսկ Հայաստանի հանրային ռադիոընկերության հետ պայմանագիր կնքելու համար՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. (010) 57-09-70):

Պայմանագիրը պետք է կնքվի առաջին եթերաժամից ոչ ուշ, քան 1 օր առաջ:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կնքած՝ նախընտրական քարոզչության նպատակով եթեր տրամադրելու պայմանագրերը համարվում են ուժը կորցրած, և դադարեցվում է նախընտրական քարոզչության նպատակով եթերի տրամադրումը:

12. Ուղիղ եթերից օգտվելու դեպքում կուսակցության ներկայացուցիչը համապատասխանաբար Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը (ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) կամ Հայաստանի հանրային ռադիոընկերությանը (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) գրավոր պետք է տեղեկացնի

համապատասխան օրվա մինչև ժամը 12.00-ն և ներկայանա հերթական եթերաժամից առնվազն 30 րոպե առաջ:

Տեսանյութեր հեռարձակելու դեպքում այդ տեսանյութերը պետք է ներկայացվեն Հայաստանի հանրային հեռուստաընկերություն (ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) ոչ ուշ, քան համապատասխան տեսանյութը հեռարձակելու օրվա ժամը 16:00 և պետք է համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝

Ֆորմատ՝ MXF

Video – HD 1920 x 1080

Frame rate - 50i (25 fps)

Video Bit Rate – 35 Mbps, VBR

Ձայներիզներ հեռարձակելու դեպքում, այդ ձայներիզները «WAV» կամ «MP3» ֆորմատով պետք է ներկայացվեն Հայաստանի հանրային ռադիոընկերություն (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) նախընտրական քարոզչության համար սահմանված եթերաժամի սկզբից առնվազն 2 ժամ առաջ:

13. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի եթերաժամը որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցերին համապատասխան չօգտագործելու դեպքում կուսակցությանը դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում:

14. Հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կուսակցությանը տրամադրված եթերաժամն այլ կուսակցության կամ նրա ներկայացուցչի կողմից օգտագործվել չի կարող:

15. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար վճարումները կատարվում են համապատասխան կուսակցության հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ (փոխանցումով):

16. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից կուսակցությանը վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե մինչև եթերաժամի սկիզբը համապատասխանաբար հանրային հեռուստատեսություն կամ հանրային ռադիո ներկայացվել է բանկի անկանխիկ վճարման (փոխանցման) հանձնարարականը:

17. Նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:

Արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղոր-դումները և հեռուստահաղորդումներն ընդմիջել առևտրային գովազդով:

18. Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն

իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի կողմից անվճար եթերաժամ տրամադրվում է ժամը 18:00-ից:

Անվճար եթերաժամը տրամադրվում է նոյեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 3-ը՝ յուրաքանչյուր օրվա համար 1 րոպե տևողությամբ:

Անվճար եթերաժամը տրամադրվում է սույն կարգին համապատասխան՝ սույն որոշման 2-րդ հավելվածով սահմանված հերթականությամբ:

19. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի կողմից Աշտարակ, Արտաշատ, Արմավիր, Գավառ, Եղեգնաձոր, Հրազդան և Վանաձոր համայնքների ավագանիների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կարող է տրամադրվել վճարովի հիմքունքներով եթերաժամանակ քարոզչության ողջ ժամանակահատվածում՝ բոլոր թեկնածուների համար ապահովելով միատեսակ պայմաններ:

Եթե նույն օրվա ընթացքում վճարովի հիմունքներով եթերաժամանակ է տրամադրվելու մեկից ավելի կուսակցությունների և առկա չէ համաձայնություն հեռարձակման հերթականության վերաբերյալ, ապա հեռարձակումն իրականացվում է սույն որոշման 2-րդ հավելվածով սահմանված հերթականությամբ:

20. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի՝

- Արագածոտնի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի Շիրակի մարզ, ք. Գյումրի, Բուլվարային փող., տ. 20 (հեռ. 077 830604).

- Արարատի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ ք. Երևան, Զավարյան փող 57/4 հասցեով (հեռ. 096 161116).

- Արմավիրի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ Արարատի մարզ, ք. Արարատ, Իսահակյան փող., շ. 32Ա հասցեով (հեռ. 077 211361).

- Գեղարքունիքի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Ս. Սևանեցու փող., շ. 6 հասցեով (հեռ. 093 233405).

- Լոռու մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց փող. 62 հասցեով (հեռ. 055 64 96 47).

- Կոտայքի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Օգոստոսի 23, թիվ 1/4 հասցեով (հեռ. 077 40 88 04).

- Վայոց ձորի մարզում սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողի հետ պայմանագիր կնքելու համար կուսակցությունը պետք է դիմի՝ Սյունիքի մարզ, ք. Կապան, Հ. Ավետիսյան 22Ա հասցեով (հեռ. 093 19 03 52):

Տեսանյութեր հեռարձակելու դեպքում այդ տեսանյութերը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան համապատասխան տեսանյութը հեռարձակելու օրվա ժամը 16:00 և պետք է համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝

Format PAL 720 x 576

Frame rate - 25 fps

Video Bit Rate-6.00 Mbps,VBR:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2021թ. նոյեմբերի 6-ի թիվ 241-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Աշտարակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցություններին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																												
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2			
«Հայրենիք» կուսակցություն	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի այունակներում նշված 1-3 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Արմավիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցությանը Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

	ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																					ԴԵԿՏԵՄԲԵՐ					
	ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																											
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1 թիվը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Արտաշատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցություններին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																										
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«Օրենք և արդարություն» կուսակցություն	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6			
«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1			
«Հայրենիք» կուսակցություն	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2			
«Քրիստոնեա Հայաստան» կուսակցություն	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3			
«Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4	5			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի այունակներում նշված 1-6 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Գավառ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցությանը, կուսակցությունների դաշինքներին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																										
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«Գուրգեն Մարտիրոսյան» դաշինք	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2			
«Մեր համայնքը» դաշինք	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1	3	2	1			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-3 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Եղեգնաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																					ԴԵԿՏԵՄԲԵՐ						
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«Ապրելու երկիր» կուսակցություն	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4			
«Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5			
Հայ կառուցողական կուսակցություն	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1			
«Հանրապետություն» կուսակցություն	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-5 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցություններին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																					ԴԵԿՏԵՄԲԵՐ						
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«Ապրելու երկիր» կուսակցություն	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4			
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1			
«Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	1	2	3			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-4 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Վանաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին գրանցված կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ՆՈՅԵՄԲԵՐ																										
ՕՐԸ	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3			
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
Հայաստանի աշխատավոր-ական սոցիալիստական կուսակցություն	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4			
«Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցություն	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5			
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6			
«Հանրապետություն» կուսակցություն	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7			
«Ապրելու երկիր» կուսակցություն	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8			
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9			
«Հայրենիք» կուսակցություն	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10			
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1			
«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինք	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2			
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3			

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-10 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**